ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/21

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 05.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.01.2021թ. թիվ 26/26-1/1040-2021 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 25.01.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/285-2021 գրության հիման վրա 27.01.2021թ. թիվ 26/26-1/1040-2021 գրությամբ նախաձեռնել է «Երվադա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երվադա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երվադա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով ընթացակարգին:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես, բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող Հավելված 1 և Հավելված 1.1-ը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից «Երվադա» ՍՊԸ-ին տրամադրվել է 1 աշխատանքային օր ժամկետ՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Նույն արձանագրության համաձայն արձանագրվել է նաև, որ 16.01.2021թ. «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերը՝ Հավելված 1 և Հավելված 1.1-ը, որոնց ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝

- Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը 2մմ-ից», այսինքն Ձեր առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», այսինքն Ձեր առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2,5մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական կամ բազալտե ամրանից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական», այսինքն Ձեր առաջարկած

տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի տեխնիկական բնութագրի մաս կազմող ամրան բառը:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշեց մերժել «Երվադա» ՍՊԸ-ի հայտը հայտը՝ ընթացակարգի 6, 7 և 12-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ «Երվադա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 25.01.2021թ.:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնա՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Երվադա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով ընթացակարգին:

15.01.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություն՝ բացակայել է ընթացակարգի հրավերով պահանջվող Հավելված 1 և Հավելված 1.1-ը:

16.01.2021թ. «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերը՝ լրացված Հավելված 1 և Հավելված 1.1-ը, որոնց ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝

- Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը 2մմ-ից»,

այսինքն Ձեր առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», այսինքն Ձեր առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2,5մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական կամ բազալտե ամրանից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական», այսինքն Ձեր առաջարկած տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի տեխնիկական բնութագրի մաս կազմող ամրան բառը:

Արդյունքում հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշել է մերժել «Երվադա» ՍՊԸ-ի հայտը հայտը ընթացակարգի 6, 7 և 12-րդ չափաբաժինների մասով:

«Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2021/21 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Գտնում ենք, որ 16.01.2021թ. «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում և Հավելված 1.1-ում արձանագրված անհամապատասխանությունները, ինչպես նաև դրա արդյունքում ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժելը, մեղմ ասած, իրավաչափ չէ, հետևյալ հիմնավորմամբ՝

Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը 2մմ-ից», այսինքն ուղղակիորեն հետևում է, որ ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ով նշված պատերի հաստությունը 2մմ-ից է, այսինքն սկսած 2մմ.-ից, նշանակում է ոչ պակաս 2մմ-ից և հետևաբար այստեղ չի կարող լինել տարակերպ մեկնաբանման որևէ հիմք: Համապատասխանաբար, այս մասով չի կարող արձանագրվել

անհամապատասխանություն ներկայացված փաստաթղթի և հրավերի պահանջի միջև, քանի որ Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է «պատերի հաստությունը ոչ պակաս 2մմ-ից», իսկ Ընկերությունը առաջարկել է «պատերի հաստությունը 2մմ-ից», այսինքն Ընկերության առաջարկվող պատերի հաստությունը սկսում է 2 մմ-ից:

Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», այսինքն այս չափաբաժնի մասով նույնպես ամեն ինչ հստակ է հրավերով նախատեսվել է հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից, ՍՊԸ-ն իր կողմից ներկայացրած Հավելված 1.1-ով պահպանելով Հրավերի պահանջները առաջարկել է նույն հաստությունը՝ ոչ պակաս 2,5մմ-ը և այստեղ նույնպես չի կարող լինել տարակերպ մեկնաբանում: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ՍՊԸ-ի առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2,5մմ-ից ավել է, թե՝ պակաս, սակայն վերոհիշյալը չի կարող հիմք հանդիսանալ այս մասով հայտը մերժելու համար, քանի որ ՍՊԸ-ն խստիվ պահպանել է Հրավերի տառը, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից ՍՊԸ-ի վրա դրվել է Հրավերից չբխող, ոչ համաչափ պարտականություն:

Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական կամ բազալտե ամրանից», իսկ «Երվադա» ՍՊԸ կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ <<պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական», այսինքն՝ ՍՊԸ-ն առաջնորդվելով Հրավերի պահանջներով, պետք էր իր կողմից առաջարկվող Հավելված 1.1-ով ներկայացներ կամ մետաղական ամրան կամ բազալտե ամրան՝ ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված Հավելված 1.1-ով պահպանելով Հրավերի պահանջները, առաջարկել է ամրան՝ նշելով՝ մետաղական, և բացի ամրանից ոչ մի այլ բան այստեղ լինել չէր կարող և ընդհանուր բովանդակությունից էլ պարզ է դառնում, որ խոսքը գնում է հենց ամրանի մասին: Մասնավորապես, այս չափաբաժնով ամրագրվում է ցանցարկղին ներկայացվող պահանջներ, և ամրագրվում է, որ բոլոր 4 նիստերց յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին շրջանակ, պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական կամ բազալտե ամրանից: Մինչդեռ ակնհայտ է, որ նիստերը կարող են կազմված լինել շրջանակից, որը պատրաստված է բացառապես ամրաններից, և այստեղ էականը այն է, թե ինչ նյութից է

պատրաստված ամրանը՝ մետաղից, թե՝ բազալտից: Օրինակ, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B4%D6%80%D5%A1%D5%B6 էջի համաձայն՝ ամրանը իրար հետ միացված տարրերի ամբողջություն է, որոնք լինում են մետաղական կամ բազալտե:

Վերը նշված փաստերն ի մի բերելով՝ փաստում ենք, որ նախ, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի վրա դրվել է Հրավերից չբխող, ոչ համաչափ պարտականություն՝ Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով առաջարկված տեխնիկական բնութագրի նկատմամբ: Ինչ վերաբերում է Ընթացակարգի 6-րդ և 12-րդ չափաբաժիններին, ապա գտնում ենք, որ այս մասով գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ձևական վարչարարություն: ՍՊԸ-ի կարծիքով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանրաբեռնել է «Երվադա» ՍՊԸ-ին այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, մինչդեռ ներկայացված տեխնիկական բնութագրերը իրենց ամբողջության մեջ համապատասխանել են Հրավերի պահանջներին և համապատասխանել են պատվիրատուի կարիքին:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տասնամյակների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Երվադա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»»:

«Երվադա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/21 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 3-4 աշխատանքային օրով հետաձգել նիստը՝ հնարավորություն տալով Ընկերությանը՝ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնելու դիրքորոշում:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.01.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/285-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Երվադա» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև ՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում՝ բացակայում էին ընթացակարգի հրավերով պահանջվող Հավելված 1-ը և Հավելված 1.1-ը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 15.01.2021թ ծանուցել «Երվադա» ՍՊԸ-ին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

16.01.2021թ ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին ստացվել է Մասնակցի կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերը՝ Հավելված 1 և Հավելված 1.1, որոնց ուսումնասիրման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝

- Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը 2մմ-ից», այսինքն Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», այսինքն Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2,5մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական կամ բազալտե ամրանից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղակա» այսինքն Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի տեխնիկական բնութագրի մաս կազմող ամրան բառը:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը 19.01.2021թ. գնահատող հանձնաժողովը մերժել է «Երվադա» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 6-րդ, 7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/21 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/21 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, 19.01.2021թ. կայացված որոշմամբ մերժել է Ընկերության

հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից 16.01.2021թ. շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

- Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը 2մմ-ից», այսինքն՝ Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», այսինքն՝ Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2,5մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական կամ բազալտե ամրանից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական» այսինքն՝ Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի տեխնիկական բնութագրի մաս կազմող ամրան բառը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.01.2021թ. թիվ 26/26-1/1040-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.01.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/285-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Երվադա» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝*** նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

Նույն ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը***, իսկ հրավերով նախատեսված

դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետով արձանագրվել է, որ Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ «Երվադա» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են ընթացակարգի հրավերով պահանջվող Հավելված 1-ը և Հավելված 1.1-ը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով և առաջարկել Ընկերությանը՝ շտկելու անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, 19.01.2021թ. կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից 16.01.2021թ. շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

- Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը 2մմ-ից», այսինքն՝ Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատերի հաստությունը ոչ պակաս 2,5մմ-ից», այսինքն՝ Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագրում հստակ նշված չէ պատերի հաստությունը 2,5մմ-ից ավել է, թե պակաս:

- Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում նշված է «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական կամ բազալտե ամրանից», իսկ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական» այսինքն՝ Մասնակցի առաջարկած

տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի տեխնիկական բնութագրի մաս կազմող ամրան բառը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմանագրի նախագծի Հավելված N 1-ը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, 6-րդ, 7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է հետևյալ տեսքով.

չ/h	անվանումը	տեխնիկական բնութագիրը
6.	Ցածր ճնշման խողովակներ (մետաղական խողովակ Փ-48մմ)	Պողպատյա, արտաքին տրամագիծը 48մմ, պատերի հաստությունը ***ոչ պակաս*** 2մմ-ից, երկարությունը 6մ, ԳՈՍ 10705-80: Մատակարարման ժամանակ ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ:
7.	Ցածր ճնշման խողովակներ (մետաղական խողովակ Փ-108մմ)	Պողպատյա, արտաքին տրամագիծը՝ 108 մմ, պատերի հաստությունը ***ոչ պակաս*** 2,5մմ-ից, երկարությունը 6մ, ԳՈՍ 10705-80: Մատակարարման ժամանակ ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ:
12.	Արկղեր (Ցանցարկղ (գաբիոն) պաշտպանական)	Չափերը՝ լայնությունը 1 մ, երկարությունունը 1 մ, բարձրությունը 1 մ,կազմված 4 կողային նիստերից, առանց հատակային և ծածկի նիստերի: Ցանցարկղի թույլատրելի շեղումները՝ երկարությունում, լայնությունում և բարձրությունում՝ +1 սմ: Բոլոր նիստերի ցանցերի վանդակները՝ զոդված ոչ ավել 4x4սմ չափերով, ցանցի մետաղալարի հաստությունը՝ ոչ պակաս 2մմ (ողորկ, ցինկապատ): Բոլոր 4 նիստերց յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին շրջանակ, պատրաստված՝ ***10մմ տրամագծով մետաղական*** կամ բազալտե ***ամրանից***: Ցանցարկղի ներսից բոլոր 4 նիստերին ամրացված պետք է լինի գեոտեքստիլային ծածկույթ՝ խտությունը ոչ պակաս՝ 1մք-200գր. (գրունտի հետ շփվելուց՝ չքայքայվող նյութից): Ցանցարկղը պետք է լինի ծալովի՝ մեկ նիստի վրա:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Երվադա» ՍՊԸ-ն Հավելված N 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացրել է հետևյալ տեսքով.

չ/h	անվանումը	տեխնիկական բնութագիրը
6.	Ցածր ճնշման խողովակներ (մետաղական խողովակ Փ-48մմ)	Պողպատյա, արտաքին տրամագիծը 48մմ, պատերի հաստությունը ***2մմ-ից***, երկարությունը 6մ, ԳՈՍ 10705-80: Մատակարարման ժամանակ ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ:
7.	Ցածր ճնշման	Պողպատյա, արտաքին տրամագիծը՝ 108 մմ, պատերի հաստությունը **2,5մմ-ից**,

	խողովակներ (մետաղական խողովակ Փ-108մմ)	երկարությունը 6մ, ԳՈՍ 10705-80: Մատակարարման ժամանակ ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ:
12.	Արկղեր (Ցանցարկղ (գաբիոն) պաշտպանական)	Չափերը՝ լայնությունը 1 մ, երկարությունունը 1 մ, բարձրությունը 1 մ,կազմված 4 կողային նիստերից, առանց հատակային և ծածկի նիստերի: Ցանցարկղի թույլատրելի շեղումները՝ երկարությունում, լայնությունում և բարձրությունում՝ +1 սմ: Բոլոր նիստերի ցանցերի վանդակները՝ զոդված ոչ ավել 4x4սմ չափերով, ցանցի մետաղալարի հաստությունը՝ ոչ պակաս 2մմ (ողորկ, ցինկապատ): Բոլոր 4 նիստերց յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին շրջանակ, պատրաստված՝ ***10մմ տրամագծով մետաղական***: Ցանցարկղի ներսից բոլոր 4 նիստերին ամրացված պետք է լինի գեոտեքստիլային ծածկույթ՝ խտությունը ոչ պակաս՝ 1մք-200գր. (գրունտի հետ շփվելուց՝ չքայքայվող նյութից): Ցանցարկղը պետք է լինի ծալովի՝ մեկ նիստի վրա:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրերը՝ 6-րդ, 7-րդ և 12-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված Հավելված N 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված

ժամկետում ներկայացրել է Հավելված N 1-ը՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը և Հավելված N 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, սակայն ներկայացված փաստաթղթում՝ Հավելված N 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- «Երվադա» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված Հավելված N 1.1-ով առաջարկում է՝ «պատերի հաստությունը ***2մմ-ից***, մինչդեռ Ընթացակարգի հրավերի 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով պահանջվում է «պատերի հաստությունը ***ոչ պակաս*** 2մմ-ից»:
- «Երվադա» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված Հավելված N 1.1-ով առաջարկում է՝ «պատերի հաստությունը ***2,5մմ-ից***», մինչդեռ Ընթացակարգի հրավերի 7-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով պահանջվում է «պատերի հաստությունը ***ոչ պակաս*** 2,5մմ-ից»:

Այսինքն՝ երկու դեպքում էլ, Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում հստակ չի նշվել պատերի հաստությունը 2մմ-ից և 2,5մմ-ից ավել է, թե՝ պակաս:

«Երվադա» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված Հավելված N 1.1-ով առաջարկում է՝ «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական», մինչդեռ Ընթացակարգի հրավերի 12-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով պահանջվում է՝ «պատրաստված՝ 10մմ տրամագծով մետաղական կամ բազալտե ***ամրանից***», այսինքն՝ Ընկերության կողմից առաջարկված տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի տեխնիկական բնութագրի մաս կազմող «ամրան» բառը:

Այսպիսով՝ վերը նշված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջների նկատմամբ, հանգեցրել են Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «Երվադա» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-20/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից գրությամբ վկայակոչված այն դիտարկմանը, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N 1.1-ում 6-րդ չափաբաժնի մասով նշված է՝ «պատերի հաստությունը 2մմ-ից», **<u>այսինքն՝ սկսած 2մմ-ից</u>**, նշանակում է ոչ պակաս 2մմ-ից և հետևաբար այստեղ չի կարող լինել տարակերպ մեկնաբանման որևէ հիմք, ապա սույն մասով հարկ եմ համարում նշել, որ Ընկերության նման դիտարկումն անհիմն է, քանի որ Ընկերության կողմից տեխնիկական բնութագրում չի նշվել «սկսած» բառը, որպիսի դեպքում նոր միայն հիմնավոր կլիներ Ընկերության նման դիտարկումը, նման պայմաններում հստակ չէ պատերի հաստությունը 2մմ-ից (6-րդ չափաբաժնի մասով) և 2,5մմ-ից (7-րդ չափաբաժնի մասով) ավել է, թե՝ պակաս, հետևաբար տվյալ դեպքում առկա է տարակերպ մեկնաբանման հնարավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.01.2021թ. թիվ 26/26-1/1040-2021 գրությամբ «Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Երվադա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**